# ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ




HY



# ՀԱՂԹԱՀԱՐԵՔ 50+1 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՁԵՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴԱՐՁԵՔ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ

# ՍԻՐԵԼԻ ԳՈՐԾԱԿԱ՛Լ,

Որպես միջազգային գործակալ Դուք այցելելու եք նոր վայրեր և օտար երկրներ: Այդ ճանապարհորդությունը շատ հետաքրքիր է լինելու: Լավ գործակալը պետք է վստահ լինի իր լեզվական հմտությունների վրա, որպեսզի երբեք չբացահայտի իր իրական լեզվական ինքնությունը: Այդ իսկ պատճառով Դուք պետք է հնարավորինս վարժ խոսեք օտար լեզուներով: Այս ձեռնարկը պատրաստվել է, որպեսզի օգնենք Ձեզ դառնալ լավագույն գաղտնի գործակալը: Լեզվական փորձությունները, որոնք առկա են ձեռնարկի հաջորդ էջերում, հիմնականում վերաբերում են իրական, ամենօրյա հաղորդակցմանը, որին գաղտնի գործակալը պետք է պատրաստ լինի դիմակայել: Անհնար է պատկերացնել իրական կյանքում ընթացող օտար լեզվով հաղորդակցումն առանց սթրեսի, հատկապես, երբ Դուք առաքելություն եք իրականացնում: Հաղորդակցման մեջ են մտնում նաև սխալ կատարելը, այլոց կողմից թյուր կերպով ընկալվելը, ինքնության ոչ ճիշտ ընկալվելը, լեզվանցումները:

Այս ձեռնարկում ներառված լեզվական մարտահրավերներին վերաբերող բոլոր առաջադրանքները առնչվում են իրական, ամենօրյա հաղորդակցմանը, որոնց գաղտնի գործակալը պետք է պատրաստ լինի: Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ որոշ սովորողներ ռիսկի չեն դիմում և ոչ միշտ են օգտվում այն հնարավորությունից, որ կիրառեն այն լեզուն, որը սովորում են դասարանից

դուրս: Օտար լեզվով իրական հաղորդակցումն առանց սթրեսի գործընթաց չէ, հատկապես, երբ Դուք գործուղման մեջ եք: Այն կարող է առընչվել սխալներ կատարելու. սխալ ընկալվելու,ուրիշներին չհասկանալու, այլ ինքնության ներկայացուցչի հետ շփոթելու, ձեր կողմից լեզվի կիրառման ձևը փոխելու հետ:



Գաղտնի գործակալի սույն ձեռնարկը պատրաստվել է այս իրավիճակների համար: Օգտվելով հնարավորինս շատ լեզվական մարտահրավերներից՝ ի վերջո, այն կօգնի ավելացնել գործակալի ինքնավստահությունը առաքելության ընթացքում:

Հաջողություն քեզ, Գործակա՛լ:
*LEO գլխավոր գործակալ*

Ձեր Գործակալի գաղտնանունը

Ձեր իրական անունը

Գործակալի բաժինը/դպրոցը/հաստատությունը

Մատնահետքեր

# ՁԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ



Տրված ցանկից հնարավորինս շատ մարտահրավերներ լրացրեք:

Համապատասխան վանդակում այդ մասին նշում կատարեք:

Դուք ազատ եք օգտագործել փաստաթղթի վերջում տրամադրված հատվածը `ձեր լրացուցիչ մարտահրավերներն առաջադրելու համար:

Հաշվեք Ձեր կողմից լրացված բոլոր մարտահրավերները: Լրացնելուց հետո Դուք կարող եք հավաստագիր ստանալ ԼԵՕ-ի **edl.ecml.at/languagechallenge** կայքից:

**Ուշադրություն. Խնդրում ենք չկազմաքանդել ձեռնարկը, մինչև որ չընդունեք բոլոր մարտահրավերները**



# ԻՆՉՈ՞Ւ 50+1 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ:



Նախ և առաջ, մարտահրավերները պետք է զվարճալի լինեն: Մենք դրանք անվանում ենք մարտահրավերներ, քանի որ դրանք խրախուսում են, որպեսզի Դուք ինչ-որ մի նոր բան սովորեք: Դրանք այնպիսի բաներ են, որոնք Դուք առօրյա կյանքում չեք կատարում և իրապես պետք է մի փոքր դուրս գաք Ձեր հարմարավետության գոտուց՝ դրանք կատարելու համար: Դրանցից մի քանիսը ռիսկի տարրեր են պարունակում, բայց ինչպես ասացվածքն է ասում. «Ով ռիսկի չի դիմում, նա չի շահում»:

50

50+1 մարտահրավերները տարբեր հնարավորություններ են ընձեռում, որոնք Դուք կարող եք կիրառել գործուղման ժամանակ, դասարանում, ինքներդ Ձեր համար, ընկերներիդ կամ պարզապես Ձեր ընտանիքի համար: Դրանց որոշ մասը մի փոքր ավելի դժվարին է, քան մյուսները (ամենաբարդերն առանձնացված են պատկերակով), սակայն մեծամասնությունը կարելի է փոփոխել և հարմարեցնել տարբեր տարիքային խմբերին, համատեքստերին, լեզուներին և լեզվական իմացության տարբեր մակարդակներին:

Մենք հուսով ենք, որ Դուք կոգեշնչվեք որոշ մարտահրավերներով, և որպես արդյունք, կստեղծեք Ձեր սեփական մարտահրավերները, որոնք հետո կարող եք ավելացնել ցանկին:

# 51-ՐԴ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ:

51-րդ մարտահրավերն իր բնույթով յուրօրինակ է: Այս մարտահրավերի միջոցով Դուք կարող եք իրապես բացահայտել Ձեր ստեղծարարությունը և ցույց տալ աշխարհին (կամ գոնե դրա մի մասին), թե ինչ կարող եք Դուք անել մեկ կամ ավել լեզվի կամ լեզուների իմացությամբ: Այն պարզապես կոչվում է «Ինչ ես համարձակվում անել օտար լեզվով»:

Այս մարտահրավերի համար Դուք պետք է պատրաստեք փոքր տեսահոլովակ (առավելագույնը 30 րոպե տևողությամբ) և ներբեռնեք Լեզուների եվրոպական օրվան նվիրված կայքէջում այս թեմայի վերաբերվող հատվածում: Այն պետք է հիմնված լինի սույն ձեռնարկում մատնանշված մեկ կամ մի քանի մարտահրավերների սկզբունքներին կամ պարզապես կարող է լինել լիովին նոր գաղափար:

+1

Տեսահոլովակներ պատրաստելիս խնդրում ենք զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել Ձեր կամ այլոց առողջությունը: Ամենաստեղծարար մասնակիցների տեսահոլովակները կհամալրեն Լեզուների եվրոպական օրվա կայքէջը:



# ՄԻ ՔԱՆԻ ԼԵԶՈՒՆԵՐ ՆԵՐԱՌՈՂ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

1. Ես ողջունեցի մեկին (ասեցի «ողջույն») և նույնիսկ «ես քեզ սիրում եմ» 5 լեզվով մեկ րոպեի ընթացքում

բանավոր խոսք

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

2. Ես կարողացա (ճշգրիտ կերպով) գուշակել 5 օտար լեզու Լեզուների  եվրոպական օրվան նվիրված կայքէջում զետեղված «Ի՞նչ է սա» խաղում: **edl.ecml.at/whichlanguage**

լսողական վարժություն

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

3. Ես հաշվեցի մեկից մինչև  10-ը տարբեր լեզուներով մեկ րոպեի ընթացքում:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

1000

4. Ես ողջունեցի երեք մարդու իրենց մայրենի լեզվով (որը տարբեր է Ձեր մայրենի լեզվից):

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

5. Ես 3 տարբեր լեզուներով մեկ բառ գրեցի՝ կիառելով տարբեր այբուբեններ (ինչպիսիք են՝ հունական, կիրիլիկ և լատինական այբուբենները):

գրավոր խոսք

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

6. Ես սովորեցի նշանային լեզվով 2 բառ և հեգեցի այդ բառը նշանների լեզվով (միջազգային նշանային կամ ազգային նշանային լեզվով):

նշանային լեզու

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

7. Իմ մայրենի լեզվով ես առանձնացրեցի 5 բառ, որոնք նույնն են / փոխառնված են այլ լեզուներից:

ընթերցա-նություն

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

1001

8. Ես գրեցի իմ սիրած գույնի /սպորտաձևի/ նախասիրության անունը 3 տարբեր լեզուներով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

9. Ես առանձնացրեցի և գրեցի 3 բառ իմ մայրենի լեզվով, որոնք այլ իմաստներ ունեն օտար լեզուներում (կեղծ ընկերներ):

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

10. Ես հանդիպեցի պոլիգլոտի, որը խոսում է առնվազն 5 լեզուներով և հասկացա, թե ինչու է նա խոսում այդքան շատ լեզուներով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

11. Ես լսեցի 5 երգ տարբեր լեզուներով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

# ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՆԵՐԱՌՈՂ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

12. Ես իմ սիրած 3 բառը գրեցի օտար լեզվով::

Լրացման օր | Ստորագրություն

13. Ես զավեշտալի գիրք ընթերցեցի օտար լեզվով::

Լրացման օր | Ստորագրություն

դժվար

14. Ես ինձ ներկայացրեցի տեսահոլովակում օտար լեզվով::

Լրացման օր | Ստորագրություն

15. Ես հեռախոսով/սկայպով խոսեցի օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

16. Ես փոխեցի մեկ օրով (կամ ավելի երկար ժամանակով) հեռախոսիս լեզուն:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

17. Ես ամսագիրը կամ նորություններն ընթերցեցի օտար լեզվով և այդ համառոտ պատմեցի ընկերոջս:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

18. Ես տեքստային հաղորդագրություն ուղարկեցի օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

19. Ես աուդիոգիրք ընթեցեցի օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|

20. Ես մեկ ժամ ռադիո լսեցի օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|

21. Ես հաղորդագրություն տեղադրեցի օնլայն ֆորումում կամ սոցիալական հարթակում օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|

22. Ես (ենթագրերով) կինո նայեցի օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|

23. Ես կինո նայեցի օտար լեզվով (առանց ենթագրերի):

Լրացման օր | Ստորագրություն

24. Ես նոր մարդ հանդիպեցի, որի մայրենին մեկ այլ լեզու էր, և նա այդ լեզվով էր խոսում մարդկանց հետ:

Լրացման օր | Ստորագրություն

25. Օգտագործելով բառարանը կամ այլ աղբյուր՝ ես 10 նոր բառ սովորեցի օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

26. Ես իմ սիրած սպորտային կամ հեռուստահաղորդումը նայեցի օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

1110

27. Ես կարողկե գնացի և օտար լեզվով երգ երգեցի:

Լրացման օր | Ստորագրություն

28. Ընկերոջս հետ միասին ես երգի/ռեփ երաժշտության բառեր գրեցի օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

29. Ես օգտագործեցի օտար լեզվով բաղադրատոմս ուտեստ պատրաստելու համար (առանց խոհանոցը այրելու/ինչ-որ մեկին թունավորելու):

Լրացման օր | Ստորագրություն

30. Ես թարգմանեցի օտար լեզվով երգը իմ մայրենի լեզու:

Լրացման օր | Ստորագրություն

31. Ես թեստը գրեցի օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

32. Ես կատակեցի օտար լեզվով (և ինչ-որ մեկը ծիծաղեց):

Լրացման օր | Ստորագրություն

33. Ես հաղորդագրությամբ շնորհավորեցի ինչ-որ մեկին հատուկ առիթով (ծնունդ, քննության հանձնում և այլն) օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

34. Ես կարճ պատմվածքը պատմեցի օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

35. Ես գրադարանից գիրք վերցրեցի և ընթերցեցի օտար լեզվով:

Լրացման օր    Ստորագրություն

36. Ես իմ հեռախոսի/ պլանշետի վրա ներբեռնեցի (և օգտագործեցի) լեզու ուսուցանելու անվճար ծրագիր: (Տես **www.ecml.at/ICT** :)

Լրացման օր    Ստորագրություն

37. Օտար երկրում արձակուրդի ժամանակ ես օգտագործեցի այդ երկրի լեզուն և այդ լեզվով:

Լրացման օր    Ստորագրություն

38. Ես լեզվական մարտահրավերի մասին պատմեցի ընկերոջս օտար լեզվով:

Լրացման օր    Ստորագրություն

10001

39. Ես ընկերոջս կարճ շնորհավորանք գրեցի տոնի առթիվ օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

40. Ես կիրառեցի հասցեով տեղադրված «Ինքնագնահատիր լեզվական հմտություններդ» գործիքը՝ գնահատելու իմ լեզվական մակարդակը իմ իմացած օտար լեզվով: **edl.ecml.at/languagetool**

Լրացման օր | Ստորագրություն

41. Ես ավարտեցի ԼԵՕ Մտքի խաղը՝ օգտագործելով լատինական և կիրիլիկ այբուբենները 5-ից ավելի կարճ ժամանակահատվածում:
**edl.ecml.at/braingame**

Լրացման օր | Ստորագրություն

42. Ես արդեն մեկ շաբաթ է, որ օտար լեզվով օրագիր եմ լրացնում:

Լրացման օր | Ստորագրություն

43. Ես արդեն մեկ շաբաթ է, որ «ժամադրման խոսք» խաղն եմ խաղում օտար լեզուներով:

Լրացման օր | Ստորագրություն

44. Ես մասնակցեցի համտեսային դասընթացներից մեկին՝ նվիրված Լեզուների եվրոպական օրվան, որպեսզի սովորեմ նոր լեզու:

Լրացման օր | Ստորագրություն

45. Ես անգիր սովորեցի և արտասանեցի կարճ տեքստ (բանաստեղծություն/ երգ/ պատմվածք) օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

46. Ես գնումների ցանկ պատրաստեցի օտար լեզվով:

Լրացման օր | Ստորագրություն

47. Ես սեղանի խաղ խաղացի ընկերներիս հետ օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

48. Ես իմացա, թե քանի տարբեր օտար լեզուներով են խոսում իմ դասարանում/դպրոցում/կազմակերպությունում:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

49. Ես մեկ ժամ շարունակ սպորտային խաղ խաղացի իմ ընկերների հետ և նրանց հետ այդ ընթացքում հաղորդակցվեցի միայն օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

50. Ես ամբողջ օրն անցկացրեցի ընկերներիս հետ՝հաղորդակցվելով նրանց հետ օտար լեզվով:

| Լրացման օր | Ստորագրություն |
|---|---|
| | |

# 51-րդ ՄԱՐԴԱՀՐԱՎԵՐԸ

Շնորհավորու՛մ ենք: Այժմ Դուք լիարժեք պատրաստ եք Ձեր առաքելությունը կատարելու համար: Ցույց տվեք մեզ, թե ինչ կարող եք անել:

51. Ստեղծե՛ք փոքր տեսահոլովակ և ցույց տվեք, թե ինչ կարող եք անել օտար լեզվով հիմնված վերոգրյալ մարտահրավերների վրա կամ մեկ նոր մարտահրավերի վրա, որը Դուք կստեղծեք:

Լրացման օր

Ստորագրություն

Առցանց հրահանգներին հետևելով՝ ներբեռնեք Ձեր տեսահոլովակը **edl.ecml.at/languagechallenge** հասցեով:

լսողական վարժություն · բանավոր խոսք · նշանային լեզու · ընթերցա-նություն · գրավոր խոսք · դժվար

10101

# ՁԵՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

52.

Լրացման օր

Ստորագրություն

53.

Լրացման օր

Ստորագրություն

Մենք միշտ սպասում ենք Ձեր նոր մարտահրավերներին՝ մեր նոր «Լեզվական մարտահրավերների ձեռնարկում» ընդգրկելու համար:Խնդրում ենք ուղարկել Ձեր նոր մարտահրավերները **edl.ecml.at/languagechallenge** հասցեով:

10110

# ՁԵՐ ՆՇՈՒՄՆԵՐԸ

Ես ընդհանուր առմամբ լրացրեցի ☐ մարտահրավեր:

10111

# Գործակա՛լ, ամեն ինչ կարողացա՞ր անել:

Ընդհանուր առմամբ, մարտահրավերները լրացնելուց հետո՝ ես… ինձ ավելի վստահ եմ զգում, երբ օգտագործում եմ օտար լեզու:

| Բացարձակ համաձայն չեմ | Համաձայն չեմ | Համոզված չեմ | Համաձայն եմ | Լիովին համաձայն եմ |
|---|---|---|---|---|

Ես մոտիվացված եմ ավելի հաճախ օգտագործել օտար լեզու:

Ես ավելի մեծ տեղեկացվածություն ունեմ իմ շրջապատում օգտագործվող լեզուների վերաբերյալ:

Ես կուզենայի ավելի շատ բան իմանալ այլ լեզուների վերաբերյալ:

Ես նոր հնարավորություններ և աղբյուրներ բացահայտեցի լեզուներ սովորելու/օգտագործելու համար:

11000

# ՔԱՆԻ՞ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԿԱՐՈՂ ԵՔ ՃԱՆԱՉ

A À L O A K I N H Λ Λ E E A C K Й A L À
H L E O S L E K S K A L B Y И Ê И T E S
C A L G S V E N S K A O M З N L K I R A
S T G E R I T Ê Ç T M R A C H W C A D K
T A S L I D U N V Я A J M C P П C K И Ь
U C K A Q G L I A E И V S Q Ų T У K A C
E S S G U Ă E K G K E E R D I E P O H H
D E Y T I Š C M C E G Ă F H V I Ê N N Ï
L G R L U У T H Á R Ë R E E U S K A R A
D O F B P Q O R E S A H Ų Č T S Q I H P
P I Ñ A O Д H U A N I Č Š N E V O L S K
E J Л A E S B M Ç K P V I D I Š D A I У
N E U K P E A A S E S O V U L A T T L U
Б L A Ö Z S I N E D E R L A N D S I G Ă
I M A T A S E T S I G Ç O S D A H L N M
A A Ë I T V E S S K L Ü K N K I D Â E A
M L U Q O L H C T E I A S R R I M R A L
E R A L P I Q H S R E Y A E Ü O R O L T
S Í S L E N S K A M A G Y A R T E L U I
T E ი ლ უ თ რ ა ქ E G Հ Ա Յ Ե Ր Ե Ն A S

Կարո՞ղ եք բնագրով ճանաչել լեզուների անունները բոլոր 43 լեզուներում: edl.ecml.at/languagematrix

11001

# ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լեզուների եվրոպական օրը Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ նախաձեռնությունն է, որն ամեն տարի նշվում է սեպտեմբերի 26-ին: Այդ օրվա հիմնական նպատակներն են՝

- բարձրացնել լեզվի ուսուցման կարևորության մասին իրազեկվածությունը,
- խթանել Եվրոպայի հարուստ լեզվական և մշակութային բազմազանությունը,
- խրախուսել ցկյանս լեզվական կրթությունը դպրոցում և դպրոցից դուրս:

Այս ձեռնարկում արտացոլված լեզվական մարտահրավերները մշակելիս մենք ձգտել ենք ամբողջությամբ արտացոլել այդ նպատակները:

**www.coe.int/edl**

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

11010































# ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ:

Մարտահրավերների գաղափարը հիմնված է լեզվական ռիսկերի ձեռնարկման վրա՝ մշակված Կանադայի Օտտավայի համալսարանի Պաշտոնական լեզուների և երկլեզվության ինստիտուտում: Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում պրոֆեսոր Նիկոլայ Սլավկովին և Լեզվական ռիսկերի ձեռնարկման թիմին՝ թույլատրելու հարմարեցնել հայեցակարգը և բովանդակությունը Լեզուների եվրոպական օրվան:

uOttawa

Institut des langues officielles et du bilinguisme (ILOB)

Official Languages and Bilingualism Institute (OLBI)

**ccerbal.uottawa.ca/linguistic-risk**

11011

Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնն աջակցում և համակարգում է Լեզուների եվրոպական օրը:

EDL website: www.coe.int/edl

EUROPEAN CENTRE FOR MODERN LANGUAGES

CENTRE EUROPEEN POUR LES LANGUES VIVANTES

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE